ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «11» 06 2015թ. N° 786-Ա

ՀՀ ԳԱԱ «ԷԿՈԼՈԳԱՆՈՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին նշանակել որպես փորձարկում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին արտադրանքի այն տեսակների համար, որոնց նկատմամբ կիրառվում են սույն հրամանի հավելվածում նշված տեխնիկական կանոնակարգերը՝ շնորհելով Ն-15(Հ-15) 2015 նույնականացնող համարը:

2. «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» փորձարկման լաբորատորիային համապատասխանության գնահատման մարմին նշանակել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

/ ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ